ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2017 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՆԱԽԱԲԱՆ

2017 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) իրականացման աշխատանքներն առավելապես ուղղված են եղել աշխատանքային ծրագրով նախատեսված ուսումնասիրությունների իրականացմանը: Այս համատեքստում ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքային խմբերն անցկացրել են մի շարք հանդիպումներ ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության ու օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության աշխատանքներում ներգրավված Հայաստան այցելած բրիտանացի փորձագետների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում տարվել է նաև արդյունավետ աշխատանք դոնոր կազմակերպությունների հետ: ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացին իրենց աջակցությունն են ցուցաբերում Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատունն ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), համագործակցության պատրաստակամություն է նաև հայտնել ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցության (Extractives Global Programmatic Support, EGPS) բազմադոնորային հավատարամագրային հիմնադրամին (Multi-Donor Trust) է ներկայացվել դրամաշնորհային հայտադիմում:

Հաշվետու եռամսյակում ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանությունը բերվել է ավարտուն տեսքի, և ապահովվել է դրա հասանելիությունը հանրության լայն շրջանակների համար: Շարունակվել է համագործակցությունը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2017-2018ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում

Միջոցառում 1. ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի տեխնիկական առաջադրանքի մշակում, կազմակերպության ընտրության մրցույթի անցկացում, կազմակերպության հաստատում

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակում նախնական պայանավորվածություն է ձեռք բերվել ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի ստեղծման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցում: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԿԱ (կառավարության աշխատակազմի) ԱՃԹՆ-ի պատասխանատուների կողմից մշակվել և ԲՇԽ-ին է ներկայացվել ԱՃԹՆ-ի կայքի տեխնիկական առաջադրանքը, որն ավարտուն տեսք կստանա ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության վերջնականացումից հետո: Տեխնիկական առաջադրանքի քննարկման նպատակով իրականացվել է հանդիպում ԲՇԽ-ի անդամների հետ (օգոստոսի 10-ին):

Միջոցառում 4. ԱՃԹՆ կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը[1] հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Հայաստանի Հանրային հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվող «Հրապարակում» հաղորդման շրջանակներում շարունակվել է «Թափանցիկ հանքարդյունաբերություն» հաղորդաշարը, որի նպատակն է հանրությանը իրազեկել Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների մասին, ներկայացնել Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ) անդամների, Հայաստանի ԱՃԹՆ-

[1] http://gov.am/am/eiti/

ի գործընթացին աջակցող միջազգային գործընկերների, ինչպես նաև ոլորտում ներգրավված մասնագետների կարծիքները նախաձեռնության և դրանից ակնկալվող օգուտների վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել 2 հաղորդում.

Հաղորդում 10[2]. Հարցազրույցներ Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության առաքելության տնօրեն Դեբորա Գրիզերի հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացի, գործընթացին աջակցող ԱՄՆ ՄԶԳ-ի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի և հետագա համագործակցության պատրաստակամության մասին,

Հաղորդում 11[3]. *Նվիրված է եղել* Հանրապետական երկրաբանական ֆոնդի www.geofund.am կայքի շնորհանդեսին, որտեղ բացի միջոցառման լուսաբանումից ներկայացվել են երկրաբանական ֆոնդի նյութերի թվայնացման և ոլորտային մեծածավալ տեղեկատվության հանրայնացման աշխատանքները:

Սոցիալական հոլովակների պատրաստման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից հայտարարվել էր մրցույթ, և մրցույթի հաղթող է ճանաչվել «Ալտերա» ՍՊԸ-ն: Իրազեկման բարձրացման միջոցառումների շրջանակում ներկայումս ընթանում են ԱՃԹՆ-ի ներդրման մասին պատմող սոցիալական տեսահոլովակների պատրաստման աշխատանքները: Հաջորդող ամիսներին կիրականացվի հոլովակների տարածումը սոցիալական ցանցերում և այլ առցանց հարթակներում: Իրականացվում է նաև նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջի խթանում:

Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով

Շարունակվել են պարբերաբար թարմացվել Facebook[4], YouTube[5] և Twitter[6] ցանցերում ստեղծված Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է

[2] https://youtu.be/XsgORS2Aghw
[3] https://youtu.be/JytWnipH05A
[4] https://www.facebook.com/EITIArmenia/
[5] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[6] https://twitter.com/EITI_Armenia

ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելությունը լայն հանրության համար:

Միջոցառում 7. Հաղորդակցության ռազմավարության[7] մշակում

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊՀԿ) իրականացնում է հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները: Ռազմավարության մշակման աշխատանքների շրջանակներում ՀԱՀ ՊՀԿ-ի փորձագետները հանդիպել են հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խմբի անդամներին (հուլիսի 24-ին): Համաձայն հաստատված ժամանակացույցի՝ հանրային հաղորդակցության ռազմավարության վերջնական փաստաթուղթը պետք է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ին ներկայացվեր 2017թ. օգոստոսին, սակայն հաշվետու ժամանակաշրջանում այն չի ներկայացնել:

Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում

Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ հանրապետական երկրաբանական ֆոնդի https://www.geo-fund.am/ կայքի շնորհանդեսը, որի ընթացքում ներկայացվեց նաև ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը: Ֆոնդի կայքը ստեղծվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի շրջանակում: Միջոցառմանը ներկա էին կառավարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, ԲՇԽ-ի անդամներ, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներ, ինչպես նաև Երկրաբանական գիտությունների պատմության միջազգային հանձնաժողովի 42-րդ գիտաժողովի պատվիրակներ շուրջ 40 երկրներից:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական թերթիկները տարածվել են հանրապետական երկրաբանական ֆոնդի կայքի շնորհանդեսի միջոցառման ընթացքում:

[7] Հեռահաղորդակցության ռազմավարությունը 2017 թ. մայիսի 5-ի նիստի ընթացքում վերանվանել է «Հանրային հաղորդակցության ռազմավարության»:

ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանությունը հասանելի[8] է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության պաշտոնական կայքում:

Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

Միջոցառում 11. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցության շրջանակներում ՎԶԵԲ-ի լոնդոնյան գրասենյակի կողմից տեխնիկական աջակցություն է ցուցաբերվում ԱՃԹՆ-ի անդամ մի շարք երկրներում, այդ թվում Հայաստանում՝ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին, մասնավորապես, իրական սեփականատերերի բացահայտման հարցերով խորհրդատուի (խորհրդատուների) ներգրավվելու միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և համաձայնեցվել է խորհրդատուների տեխնիկական առաջադրանքը:

Միջոցառում 12. Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ

Միջոցառում 13. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հաստատում

Միջոցառում 14. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի ներկայացում ԱՃԹՆ քարտուղարություն

Աշխատանքային ծրագրով նախատեսված 12-14 միջոցառումների իրականացումն ուշացվել է: ՎԶԵԲ-ի ծրագրով ընթացել են տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքներ: Միջոցառումների իրականացումը կընթանա՝ համաձայն ՎԶԵԲ-ի կողմից ներկայացված ժամանակացույցի: Ժամանակացույցով նախատեսված է, որ ՎԶԵԲ փորձագետը իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում կիրականացնի հանրային քննարկումներ՝ ընդգրկելով տարբեր շահագրգիռ կողմերի՝ համաձայն իր կողմից մշակված շահառուների (ներգրավելով ոչ միայն ԲՇԽ-ի

[8] https://eiti.org/sites/default/files/documents/eiti_standard_arm-new_0.pdf

անդամներին) ցանկի: Իրական սեփականատերերի բացահայտման՝ ԲՇԽ-ի կողմից հաստատված ճանապարհային քարտեզը հանրության լայն շրջանակների համար հասանելի կլինի մինչև 2018թ. հունվարի 1-ը:

ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում

Միջոցառում 15. ԲՇԽ-ի կողմից տեխնիկական առաջադրանքի կազմում, որի համաձայն տեղական և միջազգային խորհրդատուները կիրականացնեն ուսումնասիրություն անհամապատասխանությունների բացահայտման նպատակով

Մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է միջազգային փորձագետի տեխնիկական առաջադրանքը ու օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության կառուցվածքը, որը ներկայացվել է ՀԱՀ ՊՀԿ-ին: Որպես միջազգային փորձագետ է ընտրվել Քրիս Նըրզը, որը սեպտեմբերի 4-5-ին հանդիպումներ է անցկացրել ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի պատասխանատուների, ԱՃԹՆ ԲՇԽ-ի, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման, օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման ու պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբերի անդամների հետ՝ մշակվող օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության վերաբերյալ քննարկումներ իրականացնելու նպատակով:

Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում

Միջոցառում 19. Տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում քննելու է պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման տարրեր: Մասնավորապես, քննարկվելու են կոնկրետ բարեփոխումներ, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ

պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ձևավորման վրա: Ուսումնասիրվելու է նաև պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ստեղծման ազդեցությունը, այդ թվում՝ ներդրումների խթանման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համատեքստում: Քննարկումների արդյունքում որոշվեց «Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի խթանում» վերնագրով բաժինը ներառել օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության մեջ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում

Միջոցառում 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները հանդիպումներ են ունեցել գործընկեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Հայաստանում Բրիտանական դեսպանատան, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին միջազգային կազմակերպությունների մասնակցության հնարավոր ուղղությունները:

2017թ. հունիսին կայացած ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Դավիթ Հարությունյանի և Համաշխարհային բանկի հանքարդյունաբերության ոլորտի գլխավոր մասնագետ Քրիսթեն Հունդի հանդիպման ընթացքում քննարկվել են Համաշխարհային բանկի դրամաշնորհներից օգտվելու հնարավորությունները, որի արդյունքում մշակվել և Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցության (Extractives Global Programmatic Support, EGPS) բազմադոնորային հավատարամագրային հիմնադրամին (Multi-Donor Trust) ներկայացվել է դրամաշնորհային հայտադիմում: Դրամաշնորհի շրջանակներում ակնկալվում է ֆինանսավորել հետևյալ գործողությունները.

- աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակմանը և ԲՇԽ-ի ու ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կարողությունների զարգացմանը,
- մշտադիտարկման և որոշումների կայացման գործընթացներում հասարակության ավելի լայն շերտեր ներգրավելու նպատակով իրազեկության

բարձրացման միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց ներգրավվածությանը,

- հասարակության համար հասանելի, բաց տվյալների գործիքներով համալրված ԱՃԹՆ-ի պորտալի ստեղծում,
- «ԱՃԹՆ-ի ուղղորդման» (EITI mainstraming) նպատակով նախնական ուսումնասիրության իրականացում՝ կառավարության և ընկերությունների հաշվետվությունների ներկայացման առկա համակարգերը հզորացնելու և «ԱՃԹՆ-ի ուղղորդման» աշխատանքային ծրագրի մշակման միջոցով:

Հուլիսի 18-ին ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի ընթացքում կայացավ Երևանում Բրիտանական դեսպանության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագրի մեկնարկը: Ծրագրի իրականացնող գործընկերն է հանդիսանում ՀԱՀ ՊՀԿ-ն: Ծրագրի շրջանակներում մշակվելու է ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը, հանրային հաղորդակցության ռազմավարությունը և անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, իրականացվելու են կարողությունների հզորացման միջոցառումներ:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցության շրջանակում ՎԶԵԲ-ի ԱՃԹՆ-ի իրական սեփականատերերի բացահայտման օժանդակության ծրագրով նախատեսվում է ԱՃԹՆ-ի մինչև 7 անդամ երկրներում ցուցաբերել տեխնիկական օժանդակություն իրական սեփականատերերի բացահայտման պահանջների իրականացման համար: Այդ երկրներն են Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոնղոլիան, Տաջիկստանը և Ուկրաինան: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում մշակվել և համաձայնեցվել է Հայաստանի Հանրապետության իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման փորձագետների տեխնիկական առաջադրանքը:

Միջոցառում 40. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բյուջետային հայտի կազմման և ներկայացման աշխատանքներ: Ներկայացված հայտով նախատեսվում է վճարել ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի պատասխանատուների աշխատավարձը և ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարը:

Միջոցառում 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների ապրիլ-հունիս ամիսների հաշվետվությունը[9]: Կազմվել, հաստատվել և հրապարակվել են ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը[10], առաջիկա (հուլիս-սեպտեմբեր) եռամսյակի գործողությունների ծրագրի ժամանակացույցը[11], այլ փաստաթղթեր:

Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են կոնֆերանս զանգեր, իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ: ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի տեխնիկական առաջադրանքի մշակման ընթացքում համագործակցություն է հաստատվել Ղազախստանի և Մոնղոլիայի ԱՃԹՆ-ի պատասխանատուների հետ՝ նրանց ունեցած փորձը փոխառելու նպատակով (մասնավորապես, Մոնղոլիայի ԱՃԹՆ-ի կողմից ներկայացվել է ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգին առնչվող ուսումնասիրություն):

Միջոցառում 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում

---

[9] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/2_MSG_Quarterly_progress_report_April-June.pdf
[10] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/1_MSG_meeting_minutes_07_18.pdf
[11] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/3_EITI_ARMENIA_Work_Schedule_August_October.pdf

Հաշվետու ժամանակահատվածում ձևավորվել է պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբը (հավելված 1): Բացի ԲՇԽ-ի անդամներից, խմբի աշխատանքներում ներգրավվել են նաև հասարակական կազմակերպությունների («Էկոիրավունք» ՀԿ), պետական մարմինների (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն) և գիտական հաստատությունների (Երևանի պետական համալսարան) ներկայացուցիչներ: Հաշվետու ժամանակահատվածում խումբն ունեցել է հանդիպում հանքարդյունաբերության օրենդրական ոլորտի փորձագետ Քրիս Նըրզի հետ (սեպտեմբերի 5-ին):

Հաշվետու ժամանակահատվածում օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խումբն անցկացրել է երկու հանդիպում (հուլիսի 14-ին և սեպտեմբերի 4-ին), ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) աշխատանքային խումբը՝ երկու հանդիպում (հուլիսի 20-ին և օգոստոսի 29-ին), իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խումբը՝ երեք հանդիպում (հուլիսի 20-ին, օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 5-ին), հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խումբը՝ մեկ (հուլիսի 24-ին):

Միջոցառում 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում

Տես *Միջոցառում 40-ը:*

ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն

Միջոցառում 50. ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն իրականացնում է զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքները: Մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքն ու կառուցվածքը, որոնք ներկայացվել են ՀԱՀ ՊՀԿ-ին: Հաշվետու ժամանակահատվածում որպես միջազգային խորհրդատու Ջերեմի Ուիթն այցելել է Հայաստան և հանդիպումներ անցկացրել ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի պատասխանատուների, ԲՇԽ-ի, ինչպես նաև աշխատանքային խմբերի անդամների

(ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքային խումբ, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խումբ) հետ: Սեպտեմբերի 30-ին ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության հայերեն նախագիծը (ըստ ժամանակացույցի՝ պետք է ներկայացվեր սեպտեմբերի 8-ին), որն ուղարկվել է ԲՇԽ-ի անդամներին՝ կարծիքների և առաջարկությունների համար: Նախագիծը ներկայացվել է նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն:

Միջոցառում 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում

Հայաստանում ՄԹ ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրում ներառված է անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակումը, որը, ըստ սահմանված ժամանակացույցի, ներկայացվելու է ԲՇԽ-ի քննարկմանը և հաստատմանը 2017թ. 4-րդ եռամսյակում:

Միջոցառում 59. Թարգմանչական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվել է ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանությունը: Այն հաստատվել է ԲՇԽ-ի անդամների կողմից և տեղադրվել Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում[12]:

[12] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Standard_Arm-new.pdf

Հավելված 1

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՎ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբ		
1.	Վարդան Գևորգյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	vardan.gevorgyan.g@gmail.com, vgevorgyan@minenergy.am
2.	Դավիթ Անանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	davit.ananyan@minfin.am
3.	Արմեն Ստեփանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	armen@lydianinternational.co.uk
4.	Վահե Վարդանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	vahe.vardanyan@gmail.com
5.	Արթուր Գրիգորյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	art.grigorian@gmail.com
6.	Արմեն Գրիգորյան, անկախ փորձագետ, «Էկոիրավունք» ՀԿ	grigoryan.arm@gmail.com
7.	Շուշանիկ Քերոբյան, անկախ փորձագետ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Երկրաբանության, նորմատիվամեթոդական և վերլուծության բաժնի պետ	sh.kerobyan@gmail.com
8.	Հրանտ Ավետիսյան, անկախ փորձագետ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժնի պետ	a.hrant@mail.ru
9.	Շահեն Խաչատրյան, անկախ փորձագետ, ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ	sh_khach@inbox.ru
10.	Արմեն Եգանյան, անկախ փորձագետ, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ	aeganyan@mineconomy.am
11.	Լուսինե Թովմասյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	lusine.tovmasyan@gov.am
12.	Դավիթ Շինդյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	davit.shindyan@gov.am
13.	Լիլիա Շուշանյան, ՀՀ ԿԱ ղեկավարի խորհրդական, «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման» ծրագրի ղեկավար	lilya.shushanyan@gov.am